ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԻ
ՊԵՏԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

# ՁԵՌՆԱՐԿ

# GUIDE

## TO DEVELOPMENT AND REVISION OF ACADEMIC PROGRAMMES AT STATE ACADEMY OF FINE ARTS OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ
ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

# ՁԵՌՆԱՐԿ

---


**Ձեռնարկը մշակել է ՀԳՊԱ-ի աշխատանքային խումբը՝**

Սուսաննա Կարախանյան – ՀԳՊԱ ռեկտորի խորհրդական
Մկրտիչ Այվազյան – ՀԳՊԱ-ի ուսումնագիտական գծով պրոռեկտոր
Ռուզաննա Մինասյան – ՀԳՊԱ-ի ուսումնամեթոդական մասի վարիչ
Եկատերինա Կաշինա – ՀԳՊԱ-ի ուսումնական վարչության ղեկավար
Նունե Մինասյան – ՀԳՊԱ-ի որակի ապահովման կենտրոնի ղեկավար
Մարիամ Հովհաննիսյան – ՀԳՊԱ-ի որակի ապահովման կենտրոնի մասնագետ


---


Co-funded by the
Tempus Programme
of the European Union

Այս նախագիծը ֆինանսավորվել է Եվրոպական հանձնաժողովի աջակցությամբ:



Սույն հրապարակումը արտացոլում է միայն հեղինակների տեսակետերը, և Հանձնաժողովը չի կրում որևէ պատասխանատվություն դրանում պարունակող տեղեկատվության համար:


**ԵՐԵՎԱՆ 2017**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԲԱՆ

I. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

II. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

III. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

IV. ՄԿԾ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ, ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

V. ՀՀ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ (ՈԱՇ), ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԵՎ ՄԿԾ-Ի ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ (ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ I)

VI. ՄԿԾ-ի ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ, ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

VII. ՄԿԾ-Ի ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ (ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ II)

VIII. ՄԿԾ-Ի ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ (ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ)

IX. ՄԿԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՈՒ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

X. ՄԿԾ-Ի ՔՆՆԱՐԿՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ (ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՑՈՒՄ)

XI. ՄԿԾ-Ի ՀԱՍՏԱՏՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

# ՆԱԽԱԲԱՆ

«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ»-ը մշակվել է ՏԵՄՊՈՒՍԻ «Մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների ազգային շրջանակների միջև համապատասխանության ապահովում և ստուգում (ALIGN)» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Ձեռնարկը նախատեսված է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում (այսուհետ՝ ՀԳՊԱ) մասնագիտության կրթական ծրագրեր և առանձին դասընթացներ կամ մոդուլներ մշակող մասնագիտական խմբերի ու առանձին դասախոսների համար: «ՀՀ որակավորումների ազգային շրջանակին մասնագիտության կրթական ծրագրերի համապատասխանեցման ուղեցույց»-ի և «ՀԳՊԱ ուսանողի գնահատման համակարգ հայեցակարգ»-ի հետ միասին սույն ձեռնարկը նպատակ ունի համակարգել ՀԳՊԱ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) մշակման, վերանայման, ՄԿԾ-երի և ՀՀ ՈԱՇ-ի համաձայնեցման, արտաքին շահակիցների պահանջների համապատասխանության գործընթացը: Ձեռնարկը միտված է նաև համապատասխանեցման միջոցով նպաստել ՀԳՊԱ-ում գործող և նոր մշակվող ՄԿԾ-երի միջազգայնացմանն ու որակի բարձրացմանը:

Ձեռնարկը ներառում է ՀՀ ՈԱՇ-ին ու մասնագիտական ոլորտի հիմնական շահակիցների կարիքներին կրթական ծրագրերի համապատասխանեցման գործիքները և ՀԳՊԱ-ում նոր ՄԿԾ-երի մշակման ու գործող ՄԿԾ-երի վերանայման ընթացակարգը:

ՀԳՊԱ-ում մասնագիտության կրթական ծրագրի մշակման կամ վերանայման գործընթացի հիմնական փուլերն են.




ՄԿԾ-երի մշակման և վերանայման գործընթացի հիմքում ընկած է «ՀՀ որակավորումների ազգային շրջանակին մասնագիտության կրթական ծրագրերի համապատասխանեցման ուղեցույց»-ը[1], իսկ արդյունքում մշակված ՄԿԾ-երը պետք է ձևակերպվեն ՀԳՊԱ Գիտական խորհրդի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 28-ին կայացած նիստում հաստատված «Մասնագիտական կրթական ծրագրի նկարագրի» և «Դասընթացի/մոդուլի նկարագրի» ձևաչափերին համապատասխան (տես՝ **Հավելված 1 և Հավելված 2**):

[1] «ՀՀ որակավորումների ազգային շրջանակին մասնագիտության կրթական ծրագրերի համապատասխանեցման ուղեցույց»-ը մշակվել է Տեմպուսի ALIGN դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձևավորված ազգային խմբի կողմից, որի կազմում ներգրաված են ՀՀ գործընկեր հաստատությունների՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի ներկայացուցիչները, դրամաշնորհային ծրագրի կառավարման խումբը՝ ի դեմս ծրագրի հեղինակ, INQAAHE միջազգային ցանցի նախագահ Սուսաննա Կարախանյանի և ԵՊԼՀ-ի Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Լուիզա Միլիտոսյանի: Ուղեցույցի մշակման համար հիմք է եվրոպական գործընկեր հաստատությունների կողմից մշակված Ուղենիշերի ուղեցույցը, որտեղ արտացոլված են համադրելիության հիմնական դրույթներն ու լավագույն փորձը: Ազգային ուղեցույցը թարգմանված և տպագրված է և հասանելի է շահակիցներին: ALIGN դրամաշնորհային ծրագրի մասին հավելյալ տեղեկատվության համար՝ www.align.brusov.am

# I. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

ՄԿԾ-երի մշակման կամ վերանայման գործընթացում կարևոր դեր են խաղում այդ գործընթացն իրականացնող մասնագետների ոչ միայն տվյալ բնագավառում ունեցած մասնագիտական ունակություններն ու փորձը և նվիրվածությունը աշխատանքին, այլ նաև կրթության կառավարման և կրթության համակարգի արդի միտումների իմացությունը: Հետևաբար, ՄԿԾ-երի մշակման և/կամ վերանայման աշխատանքային խմբերում ընդգրկվում են հաստատության տվյալ ոլորտի (թողարկող և հարակից ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի) և կրթության համակարգի արդի միտումներին քաջատեղյակ (վարչական կազմ) մասնագետներ, որոնցից մեկն ընտրվում է որպես խմբի ղեկավար և աշխատանքների համակարգող: ՀԳՊԱ-ում ՄԿԾ-երի մշակման և/կամ վերանայման նպատակով ստեղծվող աշխատանքային խմբերում ներգրավվում են տվյալ մասնագիտության թողարկող և հարակից ամբիոնների 4-5 առաջատար մասնագետներ՝ որոնց թեկնածությունները առաջադրում է թողարկող ամբիոնի վարիչը, ուսումնական վարչության մեկ մասնագետ, ում թեկնածությունը առաջադրում է ուսումնական վարչության պետը, և 1-2 ուսանող, որոնց թեկնածությունը առաջադրում է Ուսանողական խորհուրդը ՀԳՊԱ ուսանողական համակազմից: Աշխատանքային խումբը մշակում է ՄԿԾ-ի մշակման/վերանայման գործողությունների ժամանակացույց: Աշխատանքային խմբի կազմը և գործողությունների ժամանակացույցը հաստատվում է ՀԳՊԱ ռեկտորատի նիստում, ինչի արդյունքում խմբին շնորհվում է պաշտոնական կարգավիճակ, տրվում են անհրաժեշտ լիազորություններ և նյութական ռեսուրսներ:

# II. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Նոր ՄԿԾ-եր մշակելիս կամ գործող ՄԿԾ-երը վերանայելիս՝ կարևոր է շահակիցների կողմից տվյալ մասնագիտության շրջանավարտներին ներկայացվող պահանջները և միջազգային նմանատիպ բուհերի լավագույն փորձի ուսումնասիրությունը: Օտարերկրյա առաջավոր ուսումնական հաստատությունների դրական փորձի ուսումնասիրությունը ապահովում է մշակվող կամ վերանայվող մասնագիտության կրթական ծրագրի մրցունակությունը: Միջազգային փորձն ուսումնասիրելիս՝ իրականացվում է համեմատական վերլուծություն, որն առավել համակարգված և արդյունավետ դարձնելու նպատակով ՀԳՊԱ-ն մշակել է հատուկ ձևաչափ (**տե՛ս Հավելված 3**):

Համեմատական վերլուծություն իրականացնելիս՝ առանձին-առանձին ներկայացվում են հաստատությունների տվյալները, նմանությունները և տարբերությունները տվյալ հաստատությունում իրականացվող ՄԿԾ-ի համեմատ առավելությունները (առկայության դեպքում), փոխառության ենթակա միավորները (ՄԿԾ-ի նպատակները, ուսումնառության արդյունքները, դասընթացները, մոդուլները) կամ գաղափարները ու դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները (**Հավելված 4-ում**): Վերլուծության վերջում կատարվում են առաջարկներ ՄԿԾ-ի վերանայման համար:

## III. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

Ոլորտի հիմնական շահակիցների կարիքները վերհանելու համար աշխատանքային խումբը՝ համագործակցելով ՈԱ և Կարիերայի կենտրոնների հետ, կապ է հաստատում տվյալ ոլորտի մասնագիտական միությունների հետ (առկայության դեպքում) և, խորհրդակցելով դրանց հետ, կազմում է ոլորտի հիմնական շահակիցների ցանկը: Բացի մասնագիտական միությունների կողմից նշված կազմակերպություններից, ցանկում ներգրավվում են նաև տվյալ ուղղությամբ ՀԳՊԱ-ի հետ ակտիվորեն համագործակցող գործատուներ և մասնագիտական այլ կազմակերպություններ: ՀԳՊԱ-ի համար մասնագիտական միություններ կարող են դիտարկվել ՀՀ նկարիչների, դիզայներների, ճարտարապետների, գործատուների միությունները, ինչպես նաև ՀՀ արդյունաբերողների և գործարարների միությունը: Աշխատանքային խումբը գործատուների շրջանում կազմակերպում է հանդիպումներ, ֆոկուս խմբեր, իրականացնում հարցումներ, որի արդյունքում վերհանվում են արտաքին շահակիցների կրթական հիմնական կարիքները համապատասխան կրթական ծրագրի շրջանավարտների համար: Հանդիպումների, ֆոկուս խմբերի և հարցումների անցկացումն ու ստացված արդյունքների ամփոփումը և վերլուծությունը իրականացվում է ՀԳՊԱ Որակի ապահովման կենտրոնի հետ միասին: Ֆոկուս խմբերի անցկացման ուղեցույցը և շրջանավարտների կարիքների վերհանման հարցաշարի օրինակը ներկայացված են **Հավելվածներ 5-ում և 6-ում**:

## IV. ՄԿԾ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ, ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Մասնագիտության կրթական ծրագրի առաքելությունը, նպատակները, խնդիրները և ուսումնառության արդյունքները օգտակար ուղեցույց են շահակիցների համար և կարող են ապահովել ուսումնառության վերջնարդյունքների համադրելիությունը ՀՀ ՈԱՇ-ի, ինչպես նաև համապատասխանությունը մասնագիտական ոլորտների և դասընթացների հետ: Առաքելությունը, նպատակները, խնդիրները և հատկապես ուսումնառության ակնկալվող արդյունքները սահմանելիս՝ աշխատանքային խումբը հաշվի է առնում համեմատական վերլուծության և հիմնական շահակիցների կարիքների վերհանման արդյունքները:

Առաքելությունը սահմանելիս աշխատանքային խումբը հաշվի է առնում հաստատության կամ ֆակուլտետի արժեքների և փիլիսոփայության ամբողջական տեսլականը: Նպատակները ձևակերպում է այնպես, որ դրանք լինեն ընդհանրական հայտարարություններ շրջանավարտների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և

արժեքների վերաբերյալ: Խնդիրները ձևակերպվում են պարզ և հակիրճ, ինչը նպաստում է հասնել նախապես սահմանված նպատակներին:

Աշխատանքային խումբը խնդիրները սահմանելիս հաշվի է առնում, որ դրանք՝

- կենտրոնանան, թե ինչ ուսանողը կսովորի, այլ ոչ թե ինչ ծավալ պետք է մատուցվի դասախոսների կողմից,
- նկարագրեն, թե ինչպես ուսանողը պետք է ցույց տա նախապես սահմանված գիտելիքների, հմտությունների և արժեքների ձեռքբերումը,
- հիմք են դասընթացների և մոդուլների կրթական նպատակների մշակման համար,
- քաջալերեն ուսանողին դառնալ գիտակցող ուսումնառող, ով ուղղորդում և վերահսկում է սեփական ուսումը,
- քաջալերեն դասախոսին դառնալ գիտակցող դասախոս, ով՝ համագործակցելով այլ դասախոսների և ուսումնաօժանդակ կազմի հետ, ապահովում է ուսանողի արդյունավետ ուսումնառությունը:

ՄԿԾ առաքելությունը, նպատակները և խնդիրները սահմանելուց հետո աշխատանքային խումբը ձևակերպում է տվյալ կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքները: Ուսումնառության ակնկալվող արդյունքները սահմանում են, թե ինչ պետք է գիտենա, հասկանա, կարողանա անել ուսանողը տվյալ կրթական ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո: Դրանք չափելի ձեռքբերումներ են և սահմանվում են որպես ուսանողի ձեռքբերումներ: Ուսումնառության ակնկալվող արդյունքները պետք է սահմանեն ուսանողի կարողությունների նվազագույն ընդունելի մակարդակը: Աշխատանքային խումբը պետք է սահմանի ուսումնառության ակնկալվող այնպիսի արդյունքներ, որոնք ուսանողին օգնում են հասկանալ, թե ինչ է իրենից ակնկալվում, և օգնում դասախոսներին կենտրոնանալ այն վերջնարդյունք/ների վրա, որին/որոնց պետք է հասցնել ուսանողին: ՀԳՊԱ մասնագիտության կրթական ծրագրի առաքելության, նպատակների, խնդիրների և ուսումնառության ակնկալվող արդյունքների օրինակները ներկայացված են **Հավելված 7-ում**, իսկ ուսումնառության ակնկալվող արդյունքների մշակման յուրահատկությունները մանրամասնորեն ներկայացված են ««ՀՀ որակավորումների ազգային շրջանակին մասնագիտության կրթական ծրագրերի համապատասխանեցման ուղեցույց»-ում:

Կրթական ծրագրի առաքելությունը, նպատակները, խնդիրները, ինչպես նաև ուսումնառության վերջնարդյունքները սահմանելուց հետո աշխատանքային խումբը տեղեկատվության տարածման տարբեր միջոցներով (ՀԳՊԱ պաշտոնական կայքէջ, Ուսանողի ձեռնարկ, հանդիպումներ և այլն) դրանք ներկայացնում է ներքին և արտաքին շահակիցներին:

# V. ՀՀ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԻ (ՈԱՇ), ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԵՎ ՄԿԾ-Ի ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ (ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ I)

Որակավորումների ազգային շրջանակը ընդհանուր կողմնորոշիչ համակարգ է, որը ստորակարգության սկզբունքով՝ ամենացածրից մինչև ամենաբարձր, կապում է տարբեր որակավորումների մակարդակներ միմյանց: ՈԱՇ-ը առաջարկում է նոր մոտեցում «որակավորում» հասկացությանը՝ առաջնային նշանակություն տալով ուսումնառության վերջնարդյունքներին և կարևորում նախ և առաջ այն, ինչ անձը պետք է գիտենա և կարողանա անել, որի արդյունքում իրեն պետք է շնորհվի համապատասխան որակավորման աստիճան: ՀՀ ՈԱՇ–ը սահմանում է ուսումնառության ընդհանրական արդյունքների նկարագրիչները կրթական յուրաքանչյուր մակարդակի համար (**տե՛ս Հավելված 8**):

Մասնագիտության կրթական ծրագիրը մշակելիս և/կամ վերանայելիս սահմանվող ուսումնառության արդյունքները պետք է համադրելի լինեն ՀՀ ՈԱՇ-ով այդ մակարդակի համար սահմանված նկարագրիչների, ինչպես նաև համեմատական վերլուծության և հիմնական շահակիցների կարիքների վերհանման արդյունքների հետ:

Որակավորման ազգային շրջանակի նկարագրիչներին համապատասխան ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքներ մշակելու համար աշխատանքային խումբը պետք է օգտվի ՀՀ ՈԱՇ-ի և կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների համապատասխանեցման աղյուսակից (**տե՛ս Հավելված 9**): Աղյուսակի մի կողմում ներկայացված են ՀՀ ՈԱՇ-ից դուրս բերված պահանջները, իսկ վերևում տեղադրվում են համապատասխան կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքները, որից հետո քննարկվում է դրանց համապատասխանության մակարդակը: Գործընթացի այս փուլը զուգակցվում է ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակի հետ քննարկումներով, որի արդյունքում իրականացվում է ուսումնառության ակնկալվող արդյունքների վերջնականացում: Այս փուլում կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքները իրենց մեջ պետք է ներառեն ՀՀ ՈԱՇ-ի և շահակիցների պահանջները, ինչպես նաև միջազգային փորձի արդյունքները:

# VI. ՄԿԾ-Ի ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ, ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

ՄԿԾ-ի մշակման և/կամ վերանայման այս փուլում սահմանվում է կրթական ծրագրի բովանդակությունը և դրա զարգացման քարտեզը: Հաշվի առնելով ՄԿԾ-երի բովանդակության (պարտադիր դասընթացների) վերաբերյալ ՀՀ և ներբուհական ինստիտու-

ցիոնալ պահանջները՝ աշխատանքային խումբը սահմանում է այն դասընթացները, մոդուլները և ՄԿԾ այլ բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են ՄԿԾ-ի ուսումնառության նախանշված արդյունքներին հասնելու համար: Սահմանվում են դասընթացների և ծրագրի այլ բաղադրիչների հերթականությունը, դրանց հատկացվող կրեդիտները, որի արդյունքում էլ ձևավորվում է ծրագրի ուսումնական պլանը: Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսումնական պլանների օրինակները ներկայացված են **Հավելվածներ 10-ում և 11-ում**:

Ուսումնական պլանի կազմման և/կամ վերանայման ողջ ընթացքում աշխատանքային խումբը իրականացված աշխատանքների արդյունքները քննարկում է համապատասխան կրթական ծրագիրը սպասարկող ամբիոնների դասախոսական կազմի հետ:

Ուսումնական պլանը կազմելուց հետո աշխատանքային խումբը ՄԿԾ-ն սպասարկող ամբիոններում մեկնարկում է ուսումնական պլանում ներառված բաղադրիչների մշակման առաջին փուլը: Յուրաքանչյուր դասընթացի մշակման համար համապատասխան ամբիոնում ստեղծվում է 2-4 մասնագետից կազմված աշխատանքային խումբ, որը, համագործակցելով ՄԿԾ-ի աշխատանքային խմբի հետ, հանդիպումներ է կազմակերպում ուսանողների, շրջանավարտների և այլ դասախոսների հետ դասընթացի ուսումնառության ակնկալվող արդյունքներն ու բովանդակությունը քննարկելու և հստակեցնելու նպատակով: Դասընթացների ուսումնառության վերջնարդյունքները մշակելիս աշխատանքային խումբը հաշվի է առնում մշակվող և/կամ վերանայվող կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքները: Դասընթացը մշակող խումբը պետք է ապահովի և ակնհայտորեն արտահայտի դասընթացի ակնկալվող ուսումնառության արդյունքների կապը կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքների հետ:

## VII. ՄԿԾ-Ի ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄ (ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ II)

ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների և դրա բաղադրիչների ուսումնառության արդյունքների համեմատության համար աշխատանքային խումբը պետք է օգտվի ՄԿԾ/բաղադրիչ համապատասխանեցման աղյուսակից (**տե՛ս Հավելված 12**): Աղյուսակի մի կողմում ներկայացված են ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները, իսկ մյուս կողմում տեղադրվում են դասընթացները: Աշխատանքային խումբը քննարկում է նաև յուրաքանչյուր դասընթացի ներդրումը կրթական ծրագրի այս կամ այն ուսումնառության ակնկալվող արդյունքի ձևավորման մեջ: Աշխատանքային խումբը այս գործընթացը կազմակերպելու նպատակով կազմակերպում է բաց հանդիպումներ, որոնց պարտադիր ներկա են գտնվում կրթական ծրագրի բաղադրիչների մշակման աշխատանքային խմբերը և կրթական ծրագիրը սպասարկող ամբիոնների այլ դասախոսներ, ուսանողներ, ինչպես նաև բոլոր հետաքրքրված շահակիցները: ՄԿԾ-ի բաղադրիչները

մշակող յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր դասընթացի նպատակը, ուսումնառության ակնկալվող արդյունքները և դրանց ներդրումը ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների ձևավորման մեջ: Գործընթացի այս փուլում կարող են փոփոխության ենթարկվել ինչպես տարբեր բաղադրիչների ուսումնառության վերջնարդյունքները, այնպես էլ առաջարկություններ կատարվեն որոշ բաղադրիչներ հանելու և/կամ նոր բաղադրիչներ ավելացնելու նպատակով: Նոր բաղադրիչներ ավելացնելու անհրաժեշտության առաջացման դեպքում դրանց մշակման համար ստեղծվում են նոր աշխատանքային խմբեր: Հիմնվելով հանդիպումների ընթացքում կատարված խելամիտ առաջարկությունների վրա՝ բաղադրիչների մշակման աշխատանքային խմբերը վերջնական տեսքի են բերում կրթական ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի ուսումնառության արդյունքները: Գործընթացի այս փուլի ավարտին կրթական ծրագրի մշակման խումբը և հանդիպումներում ներգրավված շահակիցները պետք է համոզվեն, որ նախատեսվող բաղադրիչները (դասընթացները, մոդուլները) ապահովում են կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող արդյունքների լիարժեք ձեռքբերումը ուսանողների կողմից:

## VIII. ՄԿԾ-Ի ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ (ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ)

ՄԿԾ-ի մշակման և/կամ վերանայման գործընթացի այս փուլում սահմանվում է կրթական ծրագրի դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանությունն ու այդ մեթոդների համապատասխանությունը սահմանված ուսումնառության ակնկալվող արդյունքներին:

ՄԿԾ-ի մշակման խումբը սահմանում է՝

- ՄԿԾ-ում ընդգրկվելու (ընդունելության) պայմաններն ու պահանջները,
- դասավանդման և ուսումնառության քաղաքականությունը,
- գնահատման մեթոդաբանությունը
- ավարտական աշխատանքների գնահատման չափանիշերը:

Նշված կետերը քննարկվում են ներքին շահակիցների շրջանում և վերջնականացվում՝ հաշվի առնելով ստացված արձագանքն ու առաջարկությունները:

Դասավանդման և գնահատման քաղաքականության սահմանումից հետո աշխատանքային խումբը ՄԿԾ-ն սպասարկող ամբիոններում մեկնարկում է բաղադրիչների (դասընթացների, մոդուլների) մշակման երկրորդ փուլը: Բաղադրիչների մշակման աշխատանքային խմբերը բաղադրիչների համար նախապես սահմանված ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան սահմանում են դասավանդման մեթոդները, ուսանողներին հանձնարարվող առաջադրանքները, գնահատման ձևերն ու չա-

փանիշերը՝ հստակորեն արտահայտելով դրանց կապը բաղադրիչի ուսումնառության ակնկալվող արդյունքների հետ: Այս փուլում սահմանվում են նաև բաղադրիչների իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսները (մասնագետներ, լաբորատորիաներ և սարքավորումներ, անհրաժեշտ նյութեր): Արդյունքում ամբողջությամբ վերջնականացվում են ՄԿԾ-ի բոլոր բաղադրիչների նկարագրերը ըստ ձևաչափի (***տե՛ս Հավելված 2)***: Մշակված դասընթացները/մոդուլները քննարկվում են ամբիոնի նիստում և հավանություն ստանալու դեպքում երաշխավորվում ՄԿԾ-ում ընդգրկվելու համար:

Ամփոփելով տվյալ ուղեցույցի 4-8 բաժիններում նկարագրված գործընթացների արդյունքները՝ ՄԿԾ-ի աշխատանքային խումբը վերջնականացնում է ՄԿԾ-ի նախագիծը՝ ունենալով որպես արդյունք ՄԿԾ-ի ամբողջ փաթեթը: ՀԳՊԱ ՄԿԾ-ի ձևաչափը ներկայացված է **Հավելված 1-ում,** իսկ ՄԿԾ-ի բոլոր բաղադրիչների լրացված նկարագրերը **Հավելված 2-ում**:

## IX. ՄԿԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՈՒ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կրթական ծրագրի ամբողջական փաթեթի նախագիծը պատրաստելուց հետո ՄԿԾ-ի աշխատանքային խումբը կրթական ծրագրի բաղադրիչների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային պահանջներից դուրս է բերում ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և այլ ռեսուրսների ցանկը: Ուսումնասիրում է ՀԳՊԱ-ում առկա ռեսուրսները և դրանց զբաղվածությունը ու կազմում այն ռեսուրսների ցանկը, որոնք անհրաժեշտ է ձեռք բերել նոր և/կամ վերանայված ՄԿԾ-ն իրականացնելու համար: Անհրաժեշտ ռեսուրսները և դրանց ձեռքբերման հնարավորությունը քննարկվում է ուսումնագիտական և ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորների հետ: Եթե ՄԿԾ-ի իրականացման համար զգալի ներդրումներ են անհրաժեշտ, ապա ֆինանսատնտեսական բաժնի կողմից կազմվում է դրանց ձեռքբերման բյուջեի նախագիծ:

## X. ՄԿԾ-Ի ՔՆՆԱՐԿՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ (ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՑՈՒՄ)

ՄԿԾ-ի մշակման խումբը բաց կոնֆերանս է կազմակերպում ՄԿԾ-ի նախագիծը ներքին և արտաքին շահակիցներին ներկայացնելու ու դրա վերաբերյալ վերջնական արձագանք ստանալու նպատակով: Կոնֆերանսի վերաբերյալ հայտարարությունը տեղադրվում է ՀԳՊԱ-ի պաշտոնական կայքէջում և բոլոր հետաքրքրված կողմերը կարող են մասնակցել: Կոնֆերանսին հրավիրվում են ներքին շահակիցները և տվյալ ոլորտում ՀԳՊԱ-ի շահակից հանդիսացող կազմակերպությունների ներկայացուցիչները: Կոնֆերանսի ներկայացուցիչներին ներկայացվում է ՄԿԾ-ի արդիականությունը, նպատակ-

ները, խնդիրները, ուսումնառության ակնակալվող արդյունքները և դրանց կապը աշխատաշուկայի կարիքների հետ:

## XI. ՄԿԾ-Ի ՀԱՍՏԱՏՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

Հաստատելու նպատակով ՄԿԾ-ն ներկայացվում է գիտական խորհրդի քննարկմանը: ՀԳՊԱ-ի գիտական խորհրդի անդամներին ներկայացվում է ՄԿԾ-ի փաթեթը և իրականացման համար անհրաժեշտ ներդրումների ծավալը: ՄԿԾ-ն հաստատելու գործընթացը կազմակերպվում է Գիտական խորհրդի կանոնակարգին համաձայն:

ՄԿԾ-ն հաստատելու դեպքում դրա իրականացման համար անհրաժեշտ ներդրումների նախահաշիվը ներառվում է ՀԳՊԱ-ի ֆինանսական ծախսերի նախահաշվում:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1: ՀԳՊԱ-ի մասնագիտության կրթական ծրագրի նկարագիր (ձևաչափ)

Հավելված 2: Դասընթացի/մոդուլի նկարագիր (ձևաչափ)

Հավելված 3: Համեմատական վերլուծության ձևաչափ

Հավելված 4: Համեմատական վերլուծության իրականացման հիմնական փուլերը

Հավելված 5: ՀԳՊԱ-ի տեղեկատվության ստացման մեթոդները ներքին և արտաքին փորձաքննության ընթացքում

Հավելված 6: Գնահատման գործիքի նկարագիրը

Հավելված 7: ՄԿԾ-ի առաքելության, նպատակների, խնդիրների և ուսումնառության արդյունքների օրինակներ

Հավելված 8: ՀՀ որակավորումների ազգային շրջանակ

Հավելված 9: ՀՀ ՈԱՇ-ի նկարագրիչների և ՄԿԾ-երի ՈՒԱ-երի հետ համապատասխանեցման աղյուսակ

Հավելված 10: Ուսումնական պլանի ձևաչափ (բակալավրի կրթական ծրագիր)

Հավելված 11: Ուսումնական պլանի ձևաչափ (մագիստրոսի կրթական ծրագիր)

Հավելված 12: ՄԿԾ-ի և դասընթացների միջև համապատասխանեցման աղյուսակ

*__Հավելված 1__*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ՆԿԱՐԱԳԻՐ

(ձևաչափ)

*(ներկայացվում է առանձին բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի համար)*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԿԾ-ի առաքելությունը և հիմնավորումը.

- շուկայի պահանջարկ,
- համապատասխանություն ՀԳՊԱ-ի առաքելությանը,
- պահանջարկը ուսանողների կողմից։

ՄԿԾ-Ի ՆԿԱՐԱԳԻՐԸ

- Նպատակ,
- Խնդիրներ,
- Որակավորում՝ կրթական աստիճանը,
- Ուսուցման ձև՝ առկա,
- Տևողություն՝ 4 կամ 2 տարի,
- Կրեդիտների թիվը՝ համապատասխանաբար՝ 240 կամ 120։

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Առավելագույնը 15 ուս. վերջնարդյունք – ՀՀ համապատասխան Որակավորումների Ազգային Շրջանակին (ՈԱՇ)

ՀՀ ՈԱՇ-ի նկարագրիչների և ՄԿԾ-երի ՈՒԱ-երի հետ համապատասխանեցման աղյուսակ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

- Գնահատման մեթոդներ – ամփոփիչ ատեստավորում
- Գնահատման սանդղակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

- Պահանջներ
- Գնահատում
- Չափանիշեր

ՄԿԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՑԱՆԿ

ԹՈՂԱՐԿՈՂ ԱՄԲԻՈՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

***Հավելված 2***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳԻՐ

**(ձևաչափ)**

*(ներկայացվում է յուրքանչյուր դասընթացի համար առանձին)*

| | |
|---|---|
| Մասնագիտության կրթական ծրագիրը | *նշել, որ ՄԿԾ-ի համար է դասընթացը* |

| | |
|---|---|
| Կարգավիճակը | *նշել պարտադիր դասընթաց է, թե կամընտրական* |

| | |
|---|---|
| Նախնական պահաջները | *նշել դասընթացի համար ուսանողը ինչ նախնական դասընթացներ պետք է անցած լինի* |

| | |
|---|---|
| Տարին, կիսամյակը | *նշել, թե դասընթացը որ կուրսում և կիսամյակում է դասավանդվում* |

| | |
|---|---|
| Ծանրաբեռնվածությունը (կրեդիտ) | *նշել դասըթնացին հատկացվող կրեդիտների քանակը* |

| | | |
|---|---|---|
| Ժամերի բաշխվածությունը | | |
| ա. Ընդհանուր ժամերի թիվը | | |
| բ. Լսարանային ժամերը | | |
| | դասախոսություն | *ժամերի թիվը* |
| | գործնական | *ժամերի թիվը* |
| | արվեստանոցային | *ժամերի թիվը* |
| | լաբորատոր | *ժամերի թիվը* |
| | ձևավորող գնահատում | *ժամերի թիվը* |
| | ամփոփիչ գնահատում | *ժամերի թիվը* |
| | այլ | *ժամերի թիվը* |
| գ. Ինքնուրույն ժամերը | | |
| | լաբորատոր | *ժամերի թիվը* |
| | արվեստանոցային | *ժամերի թիվը* |
| | Գրականության ուսումնասիրություն | *ժամերի թիվը* |
| | հանձնարարություններ | *ժամերի թիվը* |
| | այլ | *ժամերի թիվը* |

## I. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

*Նշել դասընթացի ընդհանուր նպատակը, որը պետք է նպաստի մասնագիտության կրթական ծրագրի ընդհանուր նպատակի իրականացմանը:*

## II. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*Թվարկել դասընթացի ուսումնառության վերջնարդյունքները, որոնց պետք է ուսանողը հասնի դասընթացը հաջող ավարտելիս և որոնք պետք է բխեն դասընթացի նպատակից ու համահունչ լինեն տվյալ մասնագիտության կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին:*

Դասընթացը հաջող ավարտելիս ուսանող պետք է՝

*(թվարկել առավելագույնը 6 ուսումնառության վերջնարդյունք)*

## III. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐԸ

*Նշել դասընթացի* ***թեմաները:***
*Ներկայացնել լսարանային ժամերի ընթացքում* ***օրացուցային պլանը:***

| ՇԱԲԱԹ | ԹԵՄԱ | ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ |
|---|---|---|
| 1 | | |
| | | |
| 2 | | |
| | | |
| 3 | | |
| | | |
| 4 | | |
| | | |
| 5 | | |
| | | |
| 6 | | |
| | | |
| 7 | | |
| | | |
| 8 | | |
| | | |
| 9 | | |
| | | |
| 10 | | |
| | | |
| 11 | | |
| | | |
| 12 | | |
| | | |
| 13 | | |
| | | |
| 14 | | |
| | | |
| 15 | | |
| | | |
| 16 | | |

## IV. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

*Նշել դասընթացը կազմակերպելու անհրաժեշտ **միջոցները:***

*Նշել դասընթացի համար անհրաժեշտ **գրականության ցանկը:***

## V. ԳՆԱՀԱՏՈՒՄ

*Ներկայացնել գնահատման քաղաքականությունը:*

*Գնահատման չափանիշերը:*

| N | Բաղադրիչ | Չափանիշ | Գնահա-տակիչ % - ով |
|---|---|---|---|
| 1 | Ընդհանրական և մասնագիտական գիտելիք և ըմբռնում | Տեսական ընդհանուր և մասնագիտական գիտելիք ու ըմբռնում՝<br>• կատարված աշխատանքի և նրա ներկայացման միջոցով ձեռք բերված գիտելիքների և հասկացությունների արտահայտման կարողություն,<br>• աշխատանքի կամ հետազոտության ծավալով և խորությամբ, իրականացման մոտեցումների և մեթոդաբանության հստակություն,<br>• ուսումնասիրվող ոլորտում առկա գաղափարներին, ընդունված արժեքներին և հեղինակավոր կարծիքներին ու քննարկումներին տեղեկացվածություն,<br>• ուսումնասիրվող առարկայի և մասնագիտության կրթական ծրագրի համատեքստային և քննադատական գաղափարները հասկանալու ունակություն,<br>• գաղափարների և կիրառվող միջոցների (մեթոդների) վերաբերյալ քննադատական մտածողության դրսևորում,<br>• փաստերի կամ առաջադրանքի վերլուծության կարողություն,<br>• փաստերը կամ գաղափարները համադրելու կարողություն,<br>• փաստարկի կարևորագույն տարրերը ի մի բերելու կարողություն,<br>• որոշումներ կայացնելիս խնդիրների ձևակերպման ժամանակ գիտելիքն ու փորձը կիրառելու կարողություն: | % |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | Մասնագիտական կիրառական, ինչպես նաև փոխանցելի և փոխկիրառելի կարողություններ | Մասնագիտական կիրառական փոխանցելի ինտեգրված կարողություններ՝<br><br>• կատարված աշխատանքում ցուցաբերված հմտություններ, տեխնիկայի և տեխնոլոգիայի տեղին կիրառում,<br>• մտածելակերպի և կատարված աշխատանքի համակցում,<br>• ձեռք բերված գիտելիքների և հասկացության կիրառում,<br>• ինքնուրույն ուսուցման կազմակերպում,<br>• հաղորդակցման հմտություն,<br>• տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում,<br>• խնդիրների լուծման հմտություն,<br>• ինքնավարություն ու նախաձեռնողականություն,<br>• թիմով աշխատելու կարողություն,<br>• ժամանակի արդյունավետ օգտագործում,<br>• այլոց դիտարկումներին պատշաճ արձագանքելը: | % |

*Ներկայացնել գնահատման սանդղակը:*

## VI. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկությունների, դիտողությունների և հարցերի դեպքում կարող եք դիմել ամբիոն: Ամբիոնը պատրաստ է աջակցել Ձեր առաջընթացն ապահովելու համար:

*Հավելված 3*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

## Մասնագիտության կրթական ծրագրի համեմատական վերլուծության ձևաչափ

## Համեմատական վերլուծության ենթարկվող հաստատության անվանումը

________________________________________________________________________

Համեմատական վերլուծության ենթարկվող մասնագիտության կրթական

ծրագրի անվանումը

________________________________________________________________________

Աստիճանը (բակալավրիատ/մագիստրատուրա) ____________________________

Ներկայացման ամսաթիվը ______________________________________________

Ներկայացնել համեմատական վերլուծության ենթարկվող մասնագիտության կրթական ծրագրի (ՄԿԾ) նպատակը

________________________________________________________________________

ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքների գնահատում

| Ուսումնառության վերջնարդյունքները | Դասընթացներ | Գնահատում | Լրացուցիչ տեղեկատվություն | Դասավանդման մեթոդներ | Ուսումնառության մեթոդներ |
|---|---|---|---|---|---|
| Չափելի արդյունքները, որոնք ցույց են տալիս, թե ուսանողը տվյալ ՄԿԾ-ն ավարտելիս ինչպիսի գիտելիք, կարողություններ, հմտություններ է ձեռք բերել | Այն դասընթացները, որոնց ընթացքում ուսանողը կարող է ձեռք բերել ուսումնառության վերջնարդյունքները | Ինչպե՞ս է գնահատվում ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերումը | Ուսանողների, դասախոսների կողմից դասընթացի գնահատման արդյուքները, դասալսման կամ դասավանդման գործընթացի, ուսումնական պլանի գնահատման արդյուքնները, շրջանավարտների քանակը, աշխատանքի անցնողները տոկոսը, շրջանավարտներին աշխատանքի ընդունող կազմակերպությունները, շրջանանվարտների շրջանում անցկացրած հարցումները և այլն: | Մեթոդներ, որոնք ուղղորդում են ուսանողին ուսումնառության գործընթացում | Մեթոդներ, որոնք կիրառում է ուսանողը |
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |

Ուսանողի ուսումնառության վերջնարդյունք

| Ուսումնառության վերջնարդյունք | Ռեսուրսներ/լաբորատորիաներ |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |

| **Ուսումնառության վերջնարդյունք** | **Գնահատում կամ կատարողականի ցուցանիշ**<br>(թեզեր, ավարտական նախագծեր, պորտֆոլիո նախագիծ, քննություն) | **Անցողիկ շեմի չափանիշներ** | **Որտեղ են ուսումնառության վերջնադյունքները գնահատվում**<br>(լսարանային աշխատանք, ուսումնաարտադրական պրակտիկա, նախագծեր, և այլն) |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

*Կրթական ծրագրի համեմատական վերլուծության ձևաչափ*

| |
|---|
| 1. Կրթական ծրագրի նպատակը (ներկայացնել կրթական ծրագրի ընդհանուր նպատակը) |
| |
| 2. Ուսումնառության վերջնարդյունքներ (նկարագրել տվյալ կրթական ծրագրի համար նախանշված ուսումնառության վերջնարդյունքները) |
| |
| 3. Թիրախային լսարանը (ներկայացնել՝ ովքեր են ներգրավված տվյալ կրթական ծրագրում) |
| |
| 4. Կրթական ծրագրի կազմակերպումը (ներկայացնել, թե ով է պատասխանատու կրթական ծրագրի կազմակերպման համար) |
| 4.1 Ո՞վ է պատասխանատու<br>ա. կրթական ծրագրի վարչարարության և ընդունելության համար<br>բ. կրթական ծրագրի մշակման համար<br>գ. կրթական ծրագրի իրականացման համար<br>դ. կրթական ծրագրի գնահատման, վերնայման և լրամշակման համար |

| |
|---|
| **4.2 Ինչպե՞ս է կրթական ծրագիրը ֆինանսավորվում:** |
| |
| **4.3 Ծրագրի ժամկետները (հաճախականությունը)** |
| |
| **5. Կրթական ծրագրի բովանդակությունը** |
| Կրթական ծրագրի բաղադրիչները ներառում են՝<br><br>ա. ուսումնառություն Այո ❑ Ոչ ❑<br>բ. դասավանդում Այո ❑ Ոչ ❑<br>գ. ուսումնական պլան Այո ❑ Ոչ ❑<br>դ. գնահատում Այո ❑ Ոչ ❑<br>ե. հետադարձ կապ Այո ❑ Ոչ ❑<br><br>զ. ռեսուրսներ Այո ❑ Ոչ ❑<br>է. հմտությունների և կարողությունների զարգացում Այո ❑ Ոչ ❑<br>թ. տեխնոլոգիաների կիրառում Այո ❑ Ոչ ❑<br>ժ. այլ (ներկայացնել) |
| **6. Կրթական ծրագրի կառուցվածքը (ներկայացնել, թե ինչպես է մատուցվում կրթական ծրագիրը)** |

| | |
|---|---|
| 6.1 Խորհրդատվություն տրամադրելու ժամերի քանակը | |
| 6.2 Լսարանային ժամերի քանակը | |
| 6.3 Լսարանային ժամերը (օրինակ՝ *շաբաթական օրեր, օրական ժամեր*) | |
| 6.4 Արտալսարանային աշխատանքներ (ներկայացնել առկայության դեպքում) | |

| |
|---|
| 7. Ներգրավվածության գործընթաց (ներկայացնել, թե ինչպես է կրթական ծրագիրը նպաստում ներգրավվածությանը) |
| Դասավանդման գործիքներն ու մեթոդները ներառում են՝<br><br>ա. գործնական աշխատանքներ Այո ❑ Ոչ ❑<br>բ. սեմինարներ (հրավիրված դասախոսներ...) Այո ❑ Ոչ ❑<br>գ. դասախոսություններ Այո ❑ Ոչ ❑<br>դ. աուդիովիզուալ տեխնոլոգիաների կիրառում Այո ❑ Ոչ ❑<br><br>ե. այլ (նկարագրել) |

| 8. Կրթական ծրագրի վերջնարդյունքների գնահատում (ինչպես է գնահատվում, որ սահմանված ուսումնառության վերջնարդյունքները ձեռք են բերվել) | | |
|---|---|---|
| Կրթական ծրագրի ուսումնառության վերջնարդյունքների հետ կապված. | | |
| 8.1 կրթական ծրագիրը գնահատում է ուսումնառության վերջնարդյունքները | Այո ❑ | Ոչ ❑ |
| 8.2 կրթական ծրագիրը իրականացնում է ձևավորող գնահատում | Այո ❑ | Ոչ ❑ |
| 8.3 կրթական ծրագիրը իրականացնում է ամփոփող գնահատում | Այո ❑ | Ոչ ❑ |
| 8.4 կրթական ծրագրում ներգրավվածները իրականացնում են ինքնագնահատում | Այո ❑ | Ոչ ❑ |
| 8.5 կրթական ծրագրի գնահատումը կենտրոնանում է ուսումնառության կարճաժամկետ վերջնարդյունքների վրա | Այո ❑ | Ոչ ❑ |
| 8.6 կրթական ծրագրի գնահատումը կենտրոնանում է ուսումնառության երկարաժամկետ վերջնարդյունքների վրա | Այո ❑ | Ոչ ❑ |
| 8.7 Ո՞րոնք են արդյունավետ ուսուցման հիմքերը և ինչպե՞ս են դրանք գնահատվում (հակիրճ ներկայացնել) | | |
| 9. Ինչքանո՞վ է կրթական ծրագիրը առնչվում կրթական այլ ծրագրերի հետ | | |
| 9.1 Կրթական ծրագիրը առնչվում է այլ կրթական ծրագրերի բաղադրիչների հետ | Այո ❑ | Ոչ ❑ |
| 9.2 Կրթական ծրագիրը առնչվում է մագիստրոսական կրթական ծրագրի հետ | Այո ❑ | Ոչ ❑ |
| 9.3. Այլ (ներկայացնել) | | |

**10. Կրթական ծրագրի գնահատում (որքան արդյունավետ է կրթական ծրագիրը)**

Կրթական ծրագրի արդյունավետությունը գնահատելիս ուշադրություն է դարձվում՝

**10.1 կրթական ծրագրի կազմակերպման վրա** Այո ❑ Ոչ ❑

**10.2 կրթական ծրագրի ուսումնական պլանի վրա** Այո ❑ Ոչ ❑

**10.3 ուսումնառության վերջնարդյունքների վրա** Այո ❑ Ոչ ❑

**10.4 այլ (ներկայացնել)**

Կրթական ծրագրի ազդեցությունը գործնական աշխատանքների վրա պարզելու համար ուշադրություն է դարձվում՝

**10.5 անհատական պրակտիկայի վրա** Այո ❑ Ոչ ❑

**10.6 այլ (ներկայացնել)**

*<u>Հավելված 4</u>*

# Համեմատական վերլուծության իրականացման փուլեր

## Համեմատական վերլուծության իրականացման հիմնական փուլերը՝

**1-ին փուլ. Նախագծի պատրաստում՝**

- համեմատական վերլուծության իրականացման աշխատանքային խմբի ձևավորում մասնագիտական ամբիոնների առաջավոր դասախոսներից,
- գործողությունների պլանի և ժամանակացույցի սահմանում:

**2-րդ փուլ. Տվյալների հավաքագրում՝**

- նմանատիպ ՄԿԾ-եր իրականացնող առաջավոր ուսումնական հաստատությունների որոնում համացանցում,
- ՄԿԾ-երի և դրանց դասընթացների ուսումնասիրություն,
- ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման մեթոդների ուսումնասիրություն (ՄԿԾ-երի մակարդակով),
- ուսումնառության վերջնարդյունքների, դասավանդման և ուսումնառության մեթոդների ու գնահատման մեթոդների ուսումնասիրություն (դասընթացների մակարդակով),
- ուսումնական գործընթացն ապահովող ռեսուրսների ուսումնասիրություն:

**3-րդ փուլ. Տվյալների վերլուծություն՝**

- հավաքագրված տեղեկությունների համակարգում,
- նմանությունների և տարբերությունների հայտնաբերում,
- փոխառելու արժանի գործոնների դուրսբերում,
- ՄԿԾ-երի և դասընթացների ուսումնառության վերջնարդյունքների լրացումների առաջարկի ներկայացում,
- քննարկումներ ամբիոններում, ավելի շատ աշխատակիցների ներգրավում գործընթացին:

**4-րդ փուլ. Փոփոխությունների ներդրում՝**

- ՄԿԾ-երի և դասընթացների ուսումնառության վերջնարդյունքների ցանկում փոփոխությունների կատարում,
- դասընթացների նկարագրերի թարմացում համաձայն նոր ուսումնառության վերջնարդյունքների, դասավանդման և գնահատման մեթոդների:

**5-րդ փուլ. Բարելավում՝**

- նոր տվյալների հավաքագրում արդյունքների վերահսկողության նպատակով,
- կրկնակի համեմատական վերլուծություն՝ ներդրումներից հետո:

*<u>Հավելված 5</u>*

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԻ
ՊԵՏԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՆԵՐՔԻՆ
ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ֆոկուս խմբային քննարկման մեթոդի կիրառումը ներքին
և արտաքին փորձաքննության ընթացքում

## Ֆոկուս-խմբային հետազոտության պլանավորում

Ֆոկուս խմբային քննարկման իրականացումը պահանջում է հստակ պլանավորում: Պլանավորման ընթացքում հետազոտողը պետք է կայացնի հետազոտության ծրագրին և իրականացմանը վերաբերող մի քանի որոշումներ: Այդ որոշումները ներառում են՝

- հետազոտության նպատակների,
- խնդիրների սահմանում,
- խմբերի քանակը և
- յուրաքանչյուր խմբի համար մասնակիցների որակավորումները:
- մասնակիցների քանակը,
- քննարկման իրականացման վայրը, ժամանակը, տևողությունը:

Խմբերի քանակի սահմանումը և մասնակիցների ընտրության տեխնիկաները

**<u>Խմբերի քանակը</u>** սահմանելիս կարելի է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով՝

- Ուսումնասիրվող թեմայի համար հիմնավորված ձևով կարևոր յուրաքանչյուր փոփոխականի, ցուցանիշի համար առնվազն երկու խումբ:
- Իրականացնել այնքան քննարկում, քանի դեռ չի կրկնվել արդեն ստացված տեղեկատվությունը:

Ֆոկուս խմբերի կազմի սահմանումը

Յուրաքանչյուր քննարկմանը պետք է ներգրավել 6-12 մասնակից՝

համասեռ, համատարր, այսինքն՝ հետազոտության համար կարևոր միևնույն ցուցանիշի կրողներ, օրինակ, եթե հետազոտության համար կարևոր է միևնույն խնդրի պարզաբանումը առաջին և չորրորդ կուրսեցիների մոտ, ապա պետք է քննարկումները կազմակերպել առանձին առաջին, առանձին չորրորդ կուրսեցիների հետ: Սա նպաստում է, որ մասնակիցները իրենց զգան հարմարավետ, յուրայինների շարքում:

Ֆոկուս խմբային քննարկման ուղեցույցի/հարցաշարի մշակում

- <u>Հարցաշարը մշակվում է՝ հիմնվելով հետազոտության նպատակների և խնդիրների վրա</u>:
- Տրվում են թեմաներ և կոնկրետ հարցեր, սակայն չպետք է ներառի շատ թեմաներ:
- <u>Հարցաշարը կարող է փոփոխվել</u> ամեն ֆոկուս խմբային քննարկումից հետո

- Ուղեցույցը պետք է մշակել թեմաները բնականոն հաջորդականությամբ ընդհանուրից մասնավորի գնալու տրամաբանությամբ:

Նույն հետազոտության շրջանակում անհրաժեշտ է մշակել տարբեր ուղեցույցներ տարբեր խմբային քննարկումների համար: Օրինակ, բակալավրի ուսանողների և մագիստոսի ուսանողների համար մշակել տարբեր կամ որոշ թեմաներով իրարից տարբերվող ուղեցույցներ:

Ֆոկուս խմբի տեխնիկական ապահովում

Ֆոկուս խմբային քննարկման պայմաններն են.

- Առանձնացված և հարմարավետ վայր
- Միջամտություններից, խանգարող գործոններից ապահովված վայր
- Ձայնագրմանը չխանգարող վայր

Նպատակահարմար է մասնակիցների և մոդերատորի **կիսաշրջանաձև** դասավորվածությունը

Դիտորդները կարող են աննկատ ներկա գտնվել քննարկմանը:

Բաշխման նյութ

## Ֆոկուս խմբային քննարկումների մոդերատորի և ասիստենտի դերը

Ֆոկուս խմբային քննարկումների մոդերատորի և ասիստենտի դերը

Ֆոկուս խմբի տարբեր փուլերում մոդերատորի կողմից կիրառվող տեխնիկաները

**Ակտիվ լսելու արվեստ**

Ակտիվ լսելու տեխնիկան ենթադրում է լսել մասնակիցների պատասխանները, ընկալել դրանք, վերաշարադրել և կրկնել այն մասնակիցներին:

**“Ինչու” հարցը տալու արվեստ**

Ֆոկուս խմբային քննարկման ընթացքում պետք է զարգացնել “ինչու” հարցը տալու մշակույթը, այսինքն՝ մասնակիցների յուրաքանչյուր կարծիք հասկանալու համար պետք է յուրաքանչյուր կարծիք լսելիս մասնակցին,ներին ուղղել “ինչու” հարցը:

**Մոդերատորի որոշ** առանցքային գործողությունները և սկզբունքները ներառում են՝

1. Մոդերատորը պետք է իմանա, թե քննարկման ընթացքում, երբ է պետք է անցնել ընդհանուր թեմայից առավել զգայուն թեմայի:

2. Մոդերատորը քննարկման նախորդ փուլերում արդեն ասված կարծիքը կամ տեղեկությունը քննարկման ներկա փուլում պետք է հնչեցնի, ինչը նպաստում է քննարկման շարունակականությանը. հակառակ դեպքում քննարկումը կլինի մասնատված:

3. Մոդերատորը պետք է կարողանա քննարկումը վարել ուղեցույցի բոլոր թեմաների հիման վրա՝ միաժամանակ լինելով ճկուն և հաշվի առնելով մասնակիցների՝ զրույցը տանելու տրամաբանությունը:

4. Մոդերատորը պետք է կառավարի քննարկման ընթացքում առաջացած խնդիրներ, ինչպիսին են մասնակիցների միջև կոնֆլիկտները, անհամաձայնությունները կամ մասնակիցների կողմից պատասխանելու, մասնակցելու պատրաստակամության պակասը կամ պասիվ ներգրավվածությանը քննարկմանը:

Ֆոկուս խմբի տարբեր փուլերում օգնականի կողմից կիրառվող տեխնիկաները

Սովորաբար խորհուրդ է տրվում ֆոկուս խմբային քննարկումները իրականացնել երկու հոգով՝ մոդերատոր և օգնական: Մոդերատորը վարում է քննարկումը, տալիս է հարցեր, հետևում է պատասխաններին, կառավարում է քննարկումը, իսկ օգնականը ունի օժանդակող դեր:

**Օգնականը** կարող է օգնել մոդերատորին.

- Կանխել մասնակիցների ուշադրությունը շեղող գործոնների ազդեցությունը
- Հետևել ձայնագրման գործընթացին
- Դիտարկել և գրառել մասնակիցների ոչ վերբալ հաղորդակցությունները
- Կատարել քննարկման սղագրությունը

Բաշխման նյութ 6

Ֆոկուս խմբային քննարկման փուլերը

- Նախապատրաստում
- Ներածական մաս կամ նախաբան
- Լայն քննարկում
- Ամփոփումը

**Նախապատրաստում**

Մինչ բուն քննարկման սկսելը պետք է իրականացնել հետևյալ գործողությունները.

- Դասավորել աթոռները կիսաշրջանաձև
- Ձայնագրման սարքը միացնել
- Կանխել հնարավոր անկարգությունները, խառնաշփոթը: Կանխել հնարավոր միջամտությունը. քննարկման սենյակի դուռը փակ պահել կամ ունենալ պատասխանատու, ով կկանխի անսպասելի անձանց մուտքը քննարկման սենյակ
- Կանխել անսպասելի մասնակիցների կամ դիտորդների մուտքը

Այս գործողությունների համար սովորաբար պատասխանատու է **ասիստենտը**:

**Մաս առաջին: Նախապատրաստում** *(տևողությունը մոտ 15 րոպե)*

Նախապատրաստման նպատակն է շուրջ տասը րոպեի ընթացքում անհատների խմբին վերափոխել համագործակցող խմբի:

**Մաս առաջին: Նախապատրաստում** *(տևողությունը 15 րոպե)*

Այս մասում տրվում են մասնակիցներին առնչվող հարցեր, որոնք քննարկվող առարկայի մասին պետք է միայն ընդհանուր տեղեկություններ տան: Օրինակ, եթե մասնակիցներն ուսանողներ են, պետք է խնդրել նրանց պատմել մի փոքր իրենց մասին. որ կուրսում են սովորում, քանի տարեկան են: Ասիստենտը պետք է իր մոտ նշումներ անի յուրաքանչյուր մասնակցի մասին, որպեսզի մոդերատորը կարողանա օգտվել այդ տվյալներից ինչպես քննարկման հետագա ընթացքի, այնպես էլ վերլուծության ժամանակ: Օրինակ, ասիստենտը պետք է համարակալի մասնակիցներին, նշի պաշտոնը, առարկան: Եթե ուսանող է ուսանողներին և նշի, թե որ ուսանողը որ կուրսում է սովորում կամ այլ տվյալ, որը մոդերատորին օգտակար կարող է լինել քննարկման ընթացքում:

Սակայն կարևոր է հիշել, որ՝

1. Այն հարցերը, որոնք կարող են ների մեջ դնել չպետք է տրվեն.
    - պատասխանողին կաղապարող հարցեր
    - պատասխանողների դիրքային տարբերությունները մատնանշող հարցեր
2. Այն հարցերը, որոնց միջոցով կբացահայտվի, չպետք է տրվեն:

Այս մասում տրվում են մասնակիցներին առնչվող հարցեր, որոնք քննարկվող առարկայի մասին պետք է միայն ընդհանուր տեղեկություններ տան: Օրինակ, եթե մասնակիցներն ուսանողներ են, պետք է խնդրել նրանց պատմել մի փոքր իրենց մասին. որ կուրսում են սովորում, քանի տարեկան են: Ասիստենտը պետք է իր մոտ նշումներ անի յուրաքանչյուր մասնակցի մասին, որպեսզի մոդերատորը կարողանա օգտվել այդ տվյալներից ինչպես քննարկման հետագա ընթացքի, այնպես էլ վերլուծության ժամանակ: Օրինակ, ասիստենտը պետք է համարակալի ուսանողներին և նշի, թե որ ուսանողը որ կուրսում է սովորում կամ այլ տվյալ, որը մոդերատորին օգտակար կարող է լինել քննարկման ընթացքում:

Սակայն կարևոր է հիշել, որ՝

3. Այն հարցերը, որոնք կարող են պատասխանողին կաղապարների մեջ դնել չպետք է տրվեն:
4. Այն հարցերը, որոնց միջոցով կբացահայտվի պատասխանողների դիրքային տարբերությունները, չպետք է տրվեն:

**Մաս երկրորդ: Ընդլայնված քննարկում, ֆոկուս-քննարկում** *(տևողությունը մոտ 60 րոպե)*

Խմբային քննարկման այս մասը ներառում է

- աստիճանական անցում ընդհանուր թեմաներից ավելի որոշակի խնդիրների,

